№ 15. Ապրիլի 13. — 1872 — Ապրիլի 13. № 15.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ։

Տարեկան գինն է 7 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվել խմբագրատան մէջ (Արծրունու տուն) և Եվանովի ընթերցարանումը։

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆ։

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հատարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւնները տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծանուցումն։—Լուսաւորութեան նուիրակներ։—Ներքին տեսութիւն։ Մի պատասխան։ Նամակ Բազուից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Եւրոպայի աշխատաւորների ընկերութիւն։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Դավրէժից։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Ֆեյլիէտօն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Տօների պատճառով „Մշակի“ 16-որդ համարը կ'հրատարակվի միայն հինգշաբթի օրը, ապրիլի 27-ին։

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱԿՆԵՐԸ

(Գերմանիայում ուսում առնող հայ-երիտասարդներին նուիրված)

I

Մեր հասարակութեան մէջ կայ ձգտումն նոր սերունդին լուսաւորութիւն տալ։ Բայց թէպէտ ինչ ձևով է յայտնվում այդ ձգտումը. ինքն հասարակութիւնը դեռ ևս այնքան զարգացած չէ, որ հասկանար լուսաւորութեան օգուտը, կազմէր օրինակ մի գումար, որի տոկոսներով ուղարկէր երիտասարդներին բարձր ուսումնարանները։ Բարձր ուսումը կամ մասնաւոր տեխնիկային ուսումը ստանալու համար երիտասարդը պիտի իր բոլոր յոյսը դնի կամ իր հօր մասնաւոր միջոցների վերայ, (եթէ նա կարողութիւն ունի) կամ աշխատի թագաւորական հաշուով ուղարկված լինելու, կամ վերջապէս սպասի որ հայրենակիցներից մէկը կ'բարեհաճէ իր մահից յետոյ մի գումար կտակել այդ բարի նպատակով։

II

Հասարակութիւնը զգում է պահանջմունք իր նոր սերունդին լուսաւորութիւն տալ, բայց սպասում է, որ այս ինչ կամ այն ինչ հարուստ մարդ իր որդուն ուղարկէ ուսում առնելու։ Մինչ այդ հարուստ մարդիկը, հասկանալով որ ժողովուրդը դեռ ևս ինքնաօգնութեան սկիզբը չէ ըմբռնել, ուղարկում են իրանց որդիներին այն նպատակով, որ նոքա վերադառնալով օգտաւէտ լինէին ամբողջ հասարակութեանը...։ Հաղիւ թէ, որովհետև նոցա վարմունքը հայրենիքը վերադարձած երիտասարդի հետ, մեզ հակառակն է ցոյց տալիս։ Եթէ նոքա համոզված լինէին որ վերադարձած երիտասարդը կարող է լուսաւորութեան իր դեռ ևս թարմ և զօրեղ ոյժը օգտաւէտ անել հասարակութեան համար,—ինչպէս որ այդ լինում է ամեն հասարակութեան մէջ,—նոքա կ'աշխատէին նպաստել այդ նոր ուղղութեանը, իսկոյն կ'աշխատէին օգուտ քաղել այդ նոր, զօրեղ ոյժից։ Բայց նոքա ընդհակառակն աշխատում են, որ լուսաւորութեան պարզ, զօրեղ, ինքնուրոյն ոյժը փոքր ինչ փթի, փոքր ինչ հնանայ, փոքր ինչ խոնարհվի, փոքր ինչ յուսահատվի, փոքր ինչ հրաժարվի այն անսահման հաւատից, որ նա ունէր դէպի լուսաւորութեան առաքելութիւնը..և այնուհետև գուցէ գործ կ'դնեն նորան մի օգտաւէտ բանի...։

III

Հասարակութիւնը իր կողմից ի՞նչէ անում։

Ահա ուղարկվեցաւ մի բարերարի կտակված միջոցներով օտար երկիրներում ուսում առնելու մի հայ երիտասարդ. նա սովորեց այս ինչ կամ այն ինչ գիտութիւն կամ արվեստ։ Նա սովորեց ասենք տնտեսութիւն կամ քիմիա, կամ գինեգործութիւն և այլն..։ Իր ուսումը աւարտելուց յետոյ դեռ ևս հայրենիքը չ'վերադարձած, նա հրաւէրք է ստանում օտար երկրում այս ինչ կամ այն ինչ պաշտօն ընդունելու։ Փոյթ չէ, որ նա հայ է կամ չինացի,—նա մարդ է և գիտնական է,—նորան պաշտօն են առաջարկում։ Այնտեղ աշխատանքի ոչ մի դժ, ոչ մի զրկութիւն, լուսաւորութեան ոչ մի արգիլանք չի կորչում,—ամեն բանից օգուտ քաղել են կամենում։ Դու տնտես ես, դու քիմիքոս ես, դու գինեգործ ես, դու լաւ գիտես քո արվեստը կամ գիտութիւնը,—ահա քեզ պաշտօն, դու հասարակութեանը հարկաւոր ես, չնայելով որ դու չինացի ես կամ հայ ես։

IV

Մի և նոյն երիտասարդը վերադառնում է իր հայրենիքը,—նա ի՞նչպէս է ընդունվում...։

Հին սերունդը ասում է նորան. „քո գիտութիւնը քեզ համար պահիր, ինձ հարկաւոր չէ քեզանից սովորել. ես այն նպատակով չ'ուղարկեցի քեզ որ դու ինձ օգտաւէտ լինես։ Դու ինձ նոր բան սովորեցնել չես կարող, որովհետև ես ամեն բան գիտեմ, ես անսխալական եմ։ Իմ կենսական երևելի փորձը քո ողորմելի եւրօպական գիտութիւնից գերազանց է։ Շնորհակալ եղիր, որ քեզ լուսաւորութիւն տուեցին, սուս կաց, ձայնդ մի բարձրացնիր, հասարակութեանը օգտաւէտ լինելու յոյսդ կորիր...“։

V

Հասարակութիւնը ասում է նորան, դու սովորելես գիտութիւն կամ արվեստ,—շատ ուրախ եմ. դու սովորելիս տնտեսութիւն,—բայց մեզ հարկաւոր չեն տնտեսութեան նոր, կատարելագործված միջոցները, մենք բաւական ենք մեր հին, նահապետական տնտեսական միջոցներով։ Դու առաջարկում ես գինի պատրաստելու առաւել կատարելագործված միջոցները...շնորհակալ ենք, հարկաւորութիւն չ'կայ, այդպէս էլ լաւ ենք...օրը դադրում ենք, օրը ուտում...ձեր սիստեմները ձեզ համար պահեցէք, մենք հաւատարիմ կ'մնանք մեր պապերի աւանդութիւններին, հաւատարիմ կ'մնանք սուրբ անշարժութեանը...“։

VI

Նոր, առաջադէմ, բարձր ուսում ստացած, ուսեալ սերունդը ինչպէս է պատասխան հաւատաւոր քաղաքի վերոդրեալ նշանաւոր տեղերում մեծ-պասի առաջի օրից ուսելեղէն բաները թանգացան։

Բայց էդ ոչինչ. աւելի մի զգալի անցք չէ՝ դա մեր զբիկում բաղդի ազնիւ շնորհաբաշխութիւններից մէկն է։ Էդ օրերում պ. պ. Ղասալները և Բախալները չարժուելով մարդասիրական զղացմունքից, մարդկային հաւասարութեան իրաւունքն են պահպանում ասելով թէ—խեղճն էլ իրաւունք ունի հարուստի պէս թանգ վճարել, և իր հիւանդի համար իր ուզածը առնել։

♂

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՈՅԹ

Բ-որդ անցք

(Տեսարանը ներկայացնում է մի հոյակապ տուն, որի մէջ (հոյակապ յիմարութիւնների պատճառաւ) շատ տարի՝ . . . . ջորիներ և էշեր էլին կապվում, իսկ հիմի—բիրտ զղացմունքները և կրքերը մեղմացնելու, և նիհարացած գրպանները պարարտացնելու դէպքիճ է դառել։

Էդ դէպքիճում, մարտի 28-ի երեկոյեան բազմաթիւ ճրագներ վառուեցան. գուցէ այն պատճառաւ, որ բազմաթիւ զլխնելը որ նստած էին այնտեղ, փոքր ինչ լուսաւորվին։

Էդ զիշեր պ. Ա... հայ գերատանների մասնակցութեամբ երաժշտական դրական, երեկոյի է արժանացնում հասարակութեանը։

Հէնց էդ երկու փոքրիկ բառը—երաժշտական երեկոյ—այնքան անծանօթ է մեր միջին դաս համարված հասարակութեան համար, որ անչուչտ պէտք է շատերին հետաքրքրէր, և մեծ բազմութիւն հաւաքէր, ինչպէս էլ որ պատահեցաւ։

Վերջապէս ինքը երաժշտութիւնը, այնպիսի բան է մեր կարծիքով, որ դժուար թէ մի որ և իցէ մարդ փախչի լսելուց, եթէ միջոցները ներում էին ներկայ գտնուել։—Իսկ եթէ կը կամենաս իմանալ թէ այդ այնպիսի բանը ինչ բան է, ես իմ թափառական կեանքիս ընթացքում այսքան կարողացայ տեղեկանալ. առաջին՝ երաժշտութիւնը այն բանն է, որ կարողանում է ցոյցտալ երիտասարդին ներկան—ուրախ տպաւորութիւններով—և ապագան—դառը հանդամանքներով և անփախչելի ճգնաժամով—և երկրորդ՝ երաժշտութիւնը ծերունուն էլ նոյնպէս յիշեցնում է—ներկան—իւր խախտած և տատանվող դրութեամբ, և անցեալը—ուրախ ընկերների, անձնպաղիր բարեկամների, դաղտնի համբոյրների, խաղաղ և չիոթ օրերի յիշատակութեամբ։

Մի խօսքով երաժշտութիւնը կարողանում է մեր սրտի գաղտնիքը, (որին ոչ մի անուն չենք կարող տալ), բացանել, առաջ բերել, և ձայն հանել տալ։

Երաժշտութիւնը առ հասարակ ես էսպէս եմ հասկանում, թէև պ. Ա. . . երաժշտական երեկոյից ես մի ուրիշ բան էլ հասկացայ, թէ—նորա սարքած երաժշտական երեկոն ունի իւր մէջ և այն դիւթական զօրութիւնը որ կարողանում է հասարակութեան զահլէն տանել, բայց միևնոյն ժամանակը նրա գրպանից համեստաբար օգուտ քաղել...

Օրինակի համար։

Չեմ մեզանչի, եթէ ասեմ, որ թէև պ. Ա... թառի վրա արևելեան եղանակները ածում է շատ հիանալի, բայց շատ հիացրեց նոյնպէս մեզ, երբ սկրիպկի (ջութակի) վերայ էլ ածելով՝ իրան վերարերեց ազգային այն առածը, թէ „հօրդանիդ դեօրա ոտդ ձդիր“

Չեմ սխալվի եթէ կրկնեմ, թէ Բ . . . և երկու տիկին—հանցերի—մինի կարդացածը, և վերջինների երգածը, այն աստիճանի հիանալի լաւ չէր, որ կարծեմ թէ իրանք էլ հիացել էին թէ էդ ինչիցն է որ հասարակութիւնը համբերութեամբ լսում է իրանց...

հում նորան. նա պատահում է նորան ուրախութեամբ, մինչև որ չէ ճանաչում նորան, նա, դոնէ իր արտաքին ձևերով, ցոյց է տալիս իբր թէ համակրում է նորան, նա ժպիտը բերանին մէկնում է նորան իր ձեռքը: Բայց մի յատիշատկէք...այդ համակրութիւնը անկեղծ չէ. այդ ժպիտը սուտ է: Երբ գործ կոկսէք նոցա հետ, կ'համոզվէք խօսքերիս ճշմարտութեան մէջ: Դուք համոզված էք, որ խօսքը պիտի համաձայն լինի գործին,—նոքա ընտելացել են այն համոզմունքին, թէ հարկաւորութիւն չկայ, որ խօսքը համաձայն լինի գործին: Նոքա բաւականանում են խօսքով, իսկ գործը կարող է մինչև անգամ հակառակ լինել խօսքին, ինչ ֆնաս...: Դուք կամենում էք որ խօսքը համաձայն լինի գործին,—ձեզ խելագարված կ'կարծեն:

VII

Եւ ահա նոքա փոքր առ փոքր համոզվում են, որ ձեզ հետ ոչ մի բանում յարմարվել չեն կարող: Նոքա ասում են ձեզ „մենք չ'գիտենք արդեօք դու մեզանից լաւ ես թէ վատ ես, բայց միայն մի բան գիտենք, որ մեզ պէս չես: Մենք խօսքը նպատակ էինք համարում, և բոլորովին չէինք նեղանում որ գործով ինքներս հակառակում էինք մեր խօսքերին: Մենք առաջադիմութիւն էինք քարոզում,—բայց կարոդացանք միայն անշարժութիւնը իրագործել: Մենք շարժումենք քարոզում,—բայց ստիպված ենք ոչ թէ միայն ատել, այլ և ֆնասել շարժում իրագործող մարդին, որովհետև միայն խօսքով ենք ցանկանում շարժումը, իսկ գործով ստիպված ենք անշարժ մնալ:

VIII

Եւ դեռ ևս երկար այդպէս կ'ֆնայ, մինչև որ խօսքի և գործի համաձայնութիւնը ցրնորք կ'կարծեն: Մեզ ֆնում է թէ հիների, թէ հասարակութեան, թէ նորերի հետ գործը փորձելուց յետոյ, ասել մնաք բարև և մտքումը աւելացնել—առ յաւիտեան...:

Բայց եթէ մենք այդ կ'անենք, կ'նշանակէ թէ մեզ մօտ էլ խօսքը և գործը հակառակ կ'լինին միմեանց: Եթէ մենք խօսքով սկսել ենք կռիւ նոցա հետ, պիտի և գործով շարունակենք այդ կռիւը:

Իսկ պ. Գ. . . . „վերը հայաստանից" կարդացածի համար այս կասեմ: — Հանդուցեալ Խաչատուր Աբովեանը մայրենական լեզուն սովորելու համար լաւ խրատ է գրել. հաւատումեմ, բայց քեզ ինչ: Դու միայն լաւ կարդացիր, ուրիշ:— Ուրիշ ոչինչ. պատասխանումեմ պ. . . . փոխարէն...

Պ. Դ. հիացրեց ժողովրդեան չէ թէ նորա համար միայն որ լաւ է երգում, այլ և առաջին նորա համար, որ իր ձայնի ընդունակութիւնը տոռմազել է (չխթայել է) էս երեք տարի միևնոյն „երգը" երգելով. ու ուրիշ երգ չը սովորելով և երկրորդ՝ երգելու ժամանակը գլուխը շարժելով հիանումէ ինքը իր երգից հասկացնելով հանդիսականներին „տէսէք ինչ լաւ եմ երգում" և կուրծքը դուրս ձգելով ու ուսերը բարձրացնելով համոզումէ լսողներին որ „սրտիս թելերիցն եմ ձայն հանում"

Միմիայն օրիորդ Ե. . . էր որ իր սիրուն ձայնով ոչ թէ վիրաբերեալ աննախանձելի, այլ լնդ հակառակը նախանձելի համակրութեան արժանացաւ հասարակութեան կողմից:

♂

Երրորդ երևոյթ

Գ-որդ անցք

Տեսարանը ներկայացնում է մի քուչայ, որտեղ երկու օր է որ մի սատկած շուն է զցած:

Էդ սատկած արարածի պատճառաւ ամբողջ թաղը հոտել է, և ամէնքն էլ գանգատումեն մէկ մէկու, որ իրանց առողջութիւնը ենթարկում են հոտած լեշի կործանիչ ազդեցութեանը: Էսպիսի իրաւացի գանգատից ոչ ոք չէ զարմանում. բայց ինչ կասես, եթէ ասեմ. թէ տեսարանը ներկայացնում է մի յոդուած, որից այնպիսի վարակիչ հոտ է բուրվում, ինչպէս վերոգրեալ սատկած արարածի լեշից . . .

Օտար երկրումը ձեզ ճանապարհը բաց է, ձեզ առաջարկվում են պաշտօններ և պարգևումնք...: Հայրենիքում թէ նոքա, որոնք ձեզ ուղարկելեն ուսում առնելու,— ամեն միջոցներ են գործ դնում ձեր գործունէութեանը արգելելու, ձեր եռանդը ըսպանելու համար, թէ ինքն հասարակութիւնը մերժումէ ձեր առաջարկութիւնները. թէ նոր սերունդը աշխատումէ ամեն միջոցներով խափանել ձեր հասարակական ընթացքը...:

Բայց, որովհետև ձեզ մօտ խօսքը և գործը համաձայն են, դուք պիտի գաք, որ կըռւէք..:

Փոքր թուով լինելով դուք կ'յաղթվէք, որովհետև տգիտութեան տարրի ընդիմադրութեան ոյժը դեռ ևս շատ զօրեղ է..:

Միայն բազմաթիւ լինելով, կամ դոնէ մի խումբ կազմելով, լուսաւորութեան նվիրակները կարող են յուսալ թէ կռիւը աջողակ կ'լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

„Մեղուի" 5-ը համարում կարդացինք մի յոդուած, որ ուղղած էր մեր „Ներսիսեան ուսումնարանի որդեդրութիւն" անունով գրուածքի դէմ: Մեր կողմից իսկապէս աւելորդ էր և պատասխանելը մի կրիտիկայի, որ չէ հերքում մեր բերած դլխաւոր և իրական փաստերից և ոչ մինը, բայց որպէս զի խոհեմ լռութիւնը մեր կողմից չը համարուի ընդունելութիւն անյայտ պարոնի կարծիքի, մենք կամենումենք համառօտ պարզել, թէ ինչումն է գործը:

Բ

Անկիւնից քարաձիգ եղող պ. կրիտիկոսը բարեհաճել է առանց ապացուցութեան մեզ անուանել տեսական և իրան իրական կէտից նայող: Դիցուք թէ պարոնի ինքնասիրութեանը շատ ախորժելի է կրել իր վրա վերջին անունը, բայց այդ դեռ ևս իրաւունք չէ տալիս ակներև ճշմարտութիւնը ուրանալու: Երկար որոնելուց յետոյ, թէ որն է մեր գրուածքի մէջ անհիմն տեսրիան, վերջապէս գտանք մի շատ վերացական և պարոն կրիտիկոսի համար, կարելի է բոլորովին անմատչելի նկատմունք, այն է, թէ այն դումարով, որ ուսումնարանը գործ է դնում որդեդիրներ պահելու համար, կարելի է աւելացնել մի դաստուն և մի ևնոյն ժամանակ պահել կրկնապատիկ աւելի ստիպենդիատներ. այլ և մի ամենևին Ներ. ուսումնարանին չը վերաբերող ճշմարտութիւն, Հիմի դիցուք թէ ինձ նման մի թափառական մարդ էլ վեր է կենում, և մի օրագրութեան միջոցաւ սկսում է էդ հոտած միտքը չաքաճել...

Բարձրանումէ աղաղակ, չչունչ, տրտունջ, գանգատ, և այլ զահրմար բաներ:

Մէկը ասումէ:

— Էլի իրարու հետ կռիւը սկսեցին:

Միւսը աւելացնումէ:

— Իրանք մէկ մէկու միսը ուտում են, ու յետոյ ազգին խրատ են տալի:

Իսկ երրորդը աւելացնումէ:

— Լրագիրը իրանց կրքերի, և ինտրիգաների ասպարէզ են չինել...

Կարծիք չը կայ ընթերցող որ էդ չատ անմեղ բան է, եթէ մի լրագիր մի քանի անձանց անձնական վատ յարաբերութիւնները և արպաւորութիւնները արտայայտելու միջոց է դառնում.—բայց ինչ իրաւունք ունենք չը խօսել և չը բողոքել էն մտքի և կարծիքի դէմ, որ իրա մէջը պարունակումէ մի չափազանց սիրուն յիմարութիւն:

Եթէ սատկած-շան լեշը մի քուչայ միայն հոտացնելով, քեզ իրաւունք է տալի իրան էն տեղում դցողի դէմ գանգատելու և տրանջելու, ինչի համար և իրաւունք չը պէտք է համարենք մեզ—մի մտքի դէմ մաքառել, կռուել. երբ այդ միտքը մի լրագրի միջոցաւ, պէտք է մի ամբողջ հասարակութիւն զզուեցնէ: Իմ ինչիս պէտքն է, որ ես հերքելով պ. Զուր-պարծեցողի կարծիքը, հերքումեմ մի և նոյն ժամանակը և նրա անձնական անսխալականութիւնը, և կեղծ ագիտորիտէտութիւնը...

♂

Այժմ թողնենք N. . . քաղաքը և վերադառնանք Թիֆլիս:

Տեսարանը ներկայացնումէ պ. Ծերէթելու տարանը, որտեղ պատահաբար ևս ներս մտնելով, կարդումեմ Վրաց „Դրօէբա" լրագրի համարը, որի մէջ գտնումեմ հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնը—Պարկսաստանի մէջ, Սպահանի շրջակայքում գտնվումեն մինչի 15,000 Վրաց գաղթականութիւն, որոնք Վրացիք են կոչվում պ. յօդուածագրի բերանով, դուցէ էնդուր համար. որ դեռ ևս վրացերէն խօսում են, չը նայելով որ արդէն 250 տարի անցել է, և կրօնափոխ են եղել: Ցեղոյ մի համեմատութիւն է անում հայերի և վրացոց մէջ. պսելով թէ, հայերը ունին այն յատկութիւնը, որ իրանց կրօնը պահումեն սրբութեամբ, բայց լեզուն մոռանումեն. իսկ վրացիք ընդհակառակ լեզուն երբէք չեն մոռանում, Հայերի իրանց լեզուն մոռանալը հաստատումէ Վրաստանի մին քանի տեղերում գտնված հայերի իրանց բարբառով չը խօսելու օրինակովը:

Որ Վրաստանի մին քանի տեղերում, հայերը իրանց լեզուն չը գիտեն, էդ մի ճշմարտութիւն է, որ ընդունումեմ, բայց թէ էդ մասնաւոր և փոքրիկ երևոյթից չի կարելի մի ընդհանուր վճիռ կարդալ բոլոր հայերի համար, — ես էլ մի ճշմարտութիւն է. որ պէտք է պ. յօդուածագիրը ընդունի:

Վրաստանի մէջ հայերի և վրացոց ընտանեկան կեանքը, բարքը, վարքը և հասարակական յարաբերութիւնները ամենևին չեն տարբերվում մէկ մէկուց: Իրանց կեանքի մի օրինակ լինելը, խարութիւն չէ դրել մէկը միւսի լեզուով խօսելու. և որովհետև Վրացիք իրանց հայրենիքի մէջն են գտնվում, և ներգործող տարրն էլ իրանց Վրացոցն է, և նշանաւոր բազմութիւնն էլ նրանց կողմն է, էդ պատճառաւ էլ տիրապետող լեզուն պէտք է Վրացոցը լինէր, և ոչ թէ Հայոցը: Իսկ Պարսկաստանի մէջ, հաւատով պարսկացած կինը դեռ ևս Վրացի է իր ազգային ուրիշ սովորութիւններով և յատկութիւններով: Նա Պարսից կանանց պէս երեսը չէ փակում, նրանց մօտ երթևեկութիւն չունի. իր Վրացի քոյրերի հետ ունի միայն յարաբերութիւն, հետևաբար և պէտք վրացերէն խօսի նրանց հետ: Էդ մէկ մէկուց տարբերվող կեանքն է պատճառը, որ պահում է լեզուն, և ոչ թէ դա մի առանձին յատկանիշ է ազգի բնաւորութեան:

Մեր էս մտքին ապացուցութիւն կարող է լինել Վրաստանի Հայերի իրանց լեզուի մոռանալը, որտեղ կեանքը միօրինակ պայմանների մէջն է տեղաւորուած, և Պարսկաստանի Հայոց իրանց լեզուով խօսելը, որտեղ ընդհակառակն մեծ խտրութիւն կայ Պարսից և Հայոց սովորութիւնների մէջ, և որտեղ ամէն բան տարբեր է:

♂

Վերջացնելով Ֆէլիէտոնս խոստանումեմ ընթերցող որ չուտով, կը խօսեմ քեզ հետ ուրիշ երևոյթների և անցքերի մասին, որոնք մեծ պասի օրին պատահեցան, բայց որոնց համար էս անգամ ստիպուած եմ լուռ կենալ...

Սպասիր, միւս անգամ էդ անցքերը ես կը պատմեմ քեզ, որպէս թէ Զատկին են պատահել: Թէև էդ վարմունքիս մէջը փոքր ինչ աղնիւ-խարդախութիւն ես նշմարում, բայց մէնակ ինձ մի մեղադրիր, աշխարհքն էլ մասն ունի էդ խարդախութեան մէջ: Միթէ չես իմանում, որ սուտը դուս է գնում աշխարհքում, բայց ճշմարտութիւնը ոչ: Կը դայ մի ժամանակ որ ընդհակառակը կը պատահի: Համբերենք, կատուի մանդիլը մինչի մարգն է:

— Գլխեմէն ընչրու վուտը սուտ է էս աշխարհքը, ասումէ Թիֆլիզեցի Զամբախովը:

— Գլխեմէն մինչև ոտը կը դրստուի մի օր էս աշխարհը, ասումեմ ես:

Զաքուճ:

ՄԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարդասիր. ընկերութեան անդամակցութիւնը չորս կարգի է բաժանված:—1, Հիմնադիր. 2, պատուաւոր. 3, Անփոփոխ. և 4, Տարեկան: Առաջին կարգը սահմանափակված է: Երկրորդ կարգին անդամակցողը պիտոյ է միանուագ հատուցանէ հիսպակաս քան հազար ռուբլի արծ: Երրորդինը նոյնպէս միանուագ ոչ պակաս քան հարիւր ռուբ. արծ: Իսկ չորրորդինը, որ է տարեկան, իւրաքանչիւր տարի պէտք է հատուցանէ հինգ ռուբ. արծ. և կամ աւելի ըստ կարողութեան և սրտի յօժարութեան: Վերջին կարգը խոհեմութեամբ ու դիտմամբ դրված է, որ ամեն մի հայ մարդ հեշտութեամբ կարողանայ մասնակցել այդպիսի մի հասարակական գործի: Ցուսալի է որ, վերջնոյն անդամակցողը, Բագու և ուրիշ քաղաքներում, իւրաքանչիւր տարի զոհելով իր հատուցանելիքը յետ չը մնայ ազնիւ պարտականութենից:

Անփոփոխ անդամների թիւը այժմ 105 է. իսկ տարեկանինը 56: Գուցէ ժամանակին աւելանայ երկուսների թիւը ևս, պատճառ, ամեն մի անդամ ընկերութեան, մանաւանդ իրանցից ընտրուած խորհրդական գործակատար անդամները աշխատումեն թուի վերայ թիւ աւելացնելու: Դոքա աւելի խրախուսված կը լինին այդ բարեգործութեան մէջ, եթէ տեսնեն որ և իրանց հեռաւոր եղբայրները միտք են բերում ընկերութեանը իրանց արդիւնաւոր անդամակցութեամբը, կամ նուիրական օժանդակութեամբը թէ իրանց ձեռնարկութեանը և թէ դրադարանին:

Օրիորդաց ուսումնարանի աշակերտուհեաց ուսանելի առարկաների համար յայտնի է անցեալ նամակումս: Դոցա թիւը 30-ից աւելի է: Դոցա յառաջադիմութիւնը կը յայտնուի հարցաքննութեան օրում, նոյնպէս և դրանց վերայ մտաւոր ու արուեստական մշակների աշխատանքը:

Տղայոց ուսումնարանի դոյութեան ու կառավարութեան մասին Վեհափառ Գէորգ Դ. Նաթուղիկոսը ըստ խնդրանաց ընկերութեան ի 1869 թ. յունիս ամսում բարեհաճել է և լուծել կօնդակաւոր Բագուայ երկու եկեղեցեաց տարեկան արդիւնքների երրորդական մասն բաց ի դրամական մայր դումարաց տոկոսիքներից: Որի աւելի յառաջադիմութեան մասին ընկերութիւնը առնելով իւր հոգատարութեան տակ իւր խորհրդական գործակատարների ձեռքով հոգումէ դպրա վերայ թէ մտաւորապէս և թէ նիւթապէս: Աշակերտաց թիւը հարիւրից աւելի է: Կաւելանան ևս, պատճառ Շամախուց գաղթվողներից ոմանք տանումեն այն տեղ իրանց որդիքները ուսանելու: Դոքա ուսանելու իւր ձայնը, այն ժամանակ, որ հասարակական կարծիքը երկնքից կիջնի փակուած կեանքի դռները բանալու:

Ն. Լ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մարդասիր. ընկերութեան անդամակցութիւնը չորս կարգի է բաժանված:—1, Հիմնադիր. 2, պատուաւոր. 3, Անփոփոխ. և 4, Տարեկան: Առաջին կարգը սահմանափակված է: Երկրորդ կարգին անդամակցողը պիտոյ է միանուագ հատուցանէ հիսպակաս քան հազար ռուբլի արծ: Երրորդինը նոյնպէս միանուագ ոչ պակաս քան հարիւր ռուբ. արծ: Իսկ չորրորդինը, որ է տարեկան, իւրաքանչիւր տարի պէտք է հատուցանէ հինգ ռուբ. արծ. և կամ աւելի ըստ կարողութեան և սրտի յօժարութեան: Վերջին կարգը խոհեմութեամբ ու դիտմամբ դրված է, որ ամեն մի հայ մարդ հեշտութեամբ կարողանայ մասնակցել այդպիսի մի հասարակական գործի: Ցուսալի է որ, վերջնոյն անդամակցողը, Բագու և ուրիշ քաղաքներում, իւրաքանչիւր տարի զոհելով իւր հատուցանելիքը յետ չը մնայ ազնիւ պարտականութենից:

Անփոփոխ անդամների թիւը այժմ 105 է. իսկ տարեկանինը 56: Գուցէ ժամանակին աւելանայ երկուսների թիւը ևս, պատճառ, ամեն մի անդամ ընկերութեան, մանաւանդ իրանցից ընտրուած խորհրդական գործակատար անդամները աշխատումեն թուի վերայ թիւ աւելացնելու: Դոքա աւելի խրախուսված կը լինին այդ բարեգործութեան մէջ, եթէ տեսնեն որ և իրանց հեռաւոր եղբայրները միտք են բերում ընկերութեանը իրանց արդիւնաւոր անդամակցութեամբը, կամ նուիրական օժանդակութեամբը թէ իրանց ձեռնարկութեանը և թէ դրադարանին:

Օրիորդաց ուսումնարանի աշակերտուհեաց ուսանելի առարկաների համար յայտնի է անցեալ նամակումս: Դոցա թիւը 30-ից աւելի է: Դոցա յառաջադիմութիւնը կը յայտնուի հարցաքննութեան օրում, նոյնպէս և դրանց վերայ մտաւոր ու արուեստական մշակների աշխատանքը:

Տղայոց ուսումնարանի դոյութեան ու կառավարութեան մասին Վեհափառ Գէորգ Դ. Նաթուղիկոսը ըստ խնդրանաց ընկերութեան ի 1869 թ. յունիս ամսում բարեհաճել է և լուծել կօնդակաւոր Բագուայ երկու եկեղեցեաց տարեկան արդիւնքների երրորդական մասն բաց ի դրամական մայր դումարաց տոկոսիքներից: Որի աւելի յառաջադիմութեան մասին ընկերութիւնը առնելով իւր հոգատարութեան տակ իւր խորհրդական գործակատարների ձեռքով հոգումէ դպրա վերայ թէ մտաւորապէս և թէ նիւթապէս: Աշակերտաց թիւը հարիւրից աւելի է: Կաւելանան ևս, պատճառ Շամախուց գաղթվողներից ոմանք տանումեն այն տեղ իրանց որդիքները ուսանելու: Դոքա ուսա-

---

նումեն Հայերէն և Ռուսերէն։ Դոցա յառաջադիմութիւնը, ուսանելի առարկաները, նոյնպէս և դոցա դասատիրակների արդիւնաւորութիւնը կը յայտնուին ժամանակով։

Ընկերութիւնը ունի այստեղ գրավաճառանոց, ուր գտանվում և վաճառվումեն յօգուտ ընկերութեան պ. Մ. Զորբապետանցի նուիրած իւր գրաւոր պարզ ու չափաւոր աշխատասիրածները.—որոնք են, 1, Գիտութիւն հնորհաց. 2, Շիլլոնեան կանանաւոր. 3, Վէպք զուարճալի անձից. 4, Նկատողութիւն հռովմէական եկեղեցւոյ գլխաւորութեան մասին. 5, Պարպոյ ժամք, երկու մասն. 6, Անբախտ սանդուխտ Աղուանցի. 7, Նուէր ուղափառ քրիստոնէաներին. և 8, Յուցակ յիշատակարանին։

Եթէ որ և իցէ հեղինակ և թարգմանող գրեանց ուղարկելու լինին ընկերութեան իրանց աշխատութիւնները վաճառվելու, ընկերութիւնը ընդունումէ ուղարկած գրեանքը ի վաճառ հանելու, միայն գրավաճառի պայմանով, յօգուտ գրագարանին։

Այս քանի օրը Ղուբայից հանդուցեալ պ. Պողոս Գասպարեան Ալէքսանովի կտակը, որի բովանդակութիւնը յայտնի է անցեալ նամակումս, ուղարկել էին այստեղ բարձր դատարանում հաստատվելու։

Ստացվումեն այստեղ Պարսկաստանի Թէյրան քաղաքի մեր Հայ եղբայրներից նամակներ, որոնց բովանդակութիւնն է խնդրել օժանդակութիւն իրանց թշուառ դրութեանը տաժանելի և երկարատև սովի պատճառավ։ Այդ նամակներից մէկը անցեալ օրը կարդաց եկեղեցւոյ մէջ բարեկարգ թադէոս աւագ քահանայն, որ և իւր կողմից ինչ ասելիք որ ունէր ժողովրդին առաց և խնդրեց ողորմել իրանց հեռաւոր եղբարց ըստ կարողութեան։ Դորա մասին ընտրված են արդէն քանի մի անձինք ժողովարար կամաւոր նուիրաւութեանց յօգուտ յիշեալ թշուառականներին։ Եւ այս անգամ յուսալի է, որ Բաղուայ բնակիչները ցոյց տան իրանց եղբայրսիրական հաւատիքը առատաձեռն տուրքով. ինչպէս չատ անգամ անտարբեր չեն մնացել դորա նման դիպուածներում։

Յովհաննէս Միրզաբէգեանց։

1872. մարտի 17-ին

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հաւատի տեղեկութիւնից լսումենք՝ Ելիսավետպոլում (Գանջա) և Բաղուի մէջ, բաւականին գումար հաւաքուել է Պարսկաստանի սովից տանջուող Հայազգի ժողովրդականաց նպաստելու համար։ Խիստ զգալի է մեզ, որ Թիֆլիսի հարուստ Հայհասարակութիւնը պարսկահայոց սովի մասին տակաւին մնումէ անտարբեր սառնասրտութեան մէջ։

—

Մեր Թիֆլիսի երիցփոխաններից չատերը ցոյց են տալիս իրանց ժողովրդից կախված, և մենք չատ անգամ նոցանից լսումենք, թէ բարի գործն էլ սկսելու համար, օրինակ մի ծխական ուսումնարանին օժանդակութիւն նշանակելու համար, նոցա հարկաւոր է հաշուատէսների վկայութիւնը ժողովրդի համաձայնութիւնը և կոնսիստորի հաստատութիւնը...։ Բայց ուրիշ կողմից պատահում են և այդպիսի բաներ. հաստատ աղբիւրից լսումենք՝ որ մի եկեղեցու երիցփոխանը 1869 թուից առաջ „Մեղու Հայաստանի" լրագրում հաշիւ էր տպել առանց հաշուատէսների համաձայնութեանը, որ երբ հաշուատէսները այդ անկարգութեան դէմ բողոքեցին պ. երեցփոխանը յայտնեց թէ հաշուատէսները նորա անձնական թշնամիներ լինելով, նա չէ կարող հաշիւ տալ նոցա։ Այժմ նոր հաշուատէսներ ընտրվեցան, բայց ինչպէս երևումէ դարձեալ անձնական թշնամիներ են պ. երեցփոխանի և նա դարձեալ հաշիւ չէ կամենում տալ։ Ուրեմն յիշեալ եկեղեցին 1869 թուից հաշիւ չէ տուել։ Ցաւալի է, որ ժողովուրդը չէ ընտրում այնպիսի հաշվատէսներին որոնք պ. երիցփոխանի բարեկամներ լինէին...։ Երեք տարվայ ժամանակամիջոցը լրացաւ,—բայց ժողովուրդը ոչ փոխել երիցփոխանին այժ ունի, ոչ էլ հաշիւ պահանջել կամք ունի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՕՊԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ։

Ինչ որ Եւրոպայի մշակները արին Լոնդոնի համաշխարհական հանդէսից յետոյ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի փոքրիկ սերմ այն ընկերութեան, որ այժմ այնպիսի անհանդստութիւն է պատճառում եւրոպական կառավարութիւններին և նիւթական ապահովութեան տէր մարդոց։ Ֆրանսիայի Տոլէն մշակը, Լոնդոնի աշխարհահանդէսից վերադառնալուց յետոյ, կազմեց Փարիզում ազգամիջեան ընկերութեան ֆրանսիական բաժինը։ Ուրիշները կազմեցին այդ ընկերութեան առանձին ճիւղերը Գերմանիայում, Անգլիայում, Բէլգիայում. Զվիցերիայում և ուրիշ երկիրներում։ Ընկերութիւնը այս կերպով հետզհետէ աճելով և ընդարձակութիւն ստանալով, մի ընդհանուր նախագծի կարօտ էր իր գործողութիւնների համար։ Այս պատճառով այդ մասնաւոր ընկերութիւնների ներկայացուցիչները 1864-ի սեպտեմբեր ամսին կրկին հաւաքուեցան Լոնդոնում և պայման կապեցին իրանց մէջ թէ ինչպէս ներգործեն։

×

Նոքա իրանց գործունէութեան նպատակ դրին հետևեալ տնտեսական խնդիրը, „ազատել մշակներին դրամագլխի հպատակութիւնից"։

„Այս ազատութիւնը նոյն իսկ մշակների ձեռով պիտի գլուխ բերուի։ Մշակների գործ դրած բոլոր ջանքը այս նպատակին հասնելու համար մինչև այժմ 'ի զուր անցկացաւ, որովհետև չ'կար համակրութիւն, կապ ու համամտութիւն միևնոյն երկրի զանազան արհեստների տէր մշակների մէջ և մանաւանդ զանազան տէրութիւնների մշակների մէջ"։

×

Առաջացնել այդ համամտութիւնը, կազմել մի ընդհանրական դաշնակցութիւն Եւրոպայի երկիրների մշակներից դրամագլխի դէմ պատերազմելու համար—ահա այն նպատակը, որ տուել էր իրան ազգամիջեան ընկերութիւնը։

×

Վերջին Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ այս ընկերութեան ֆրանսիական բաժինը Ֆրանսիայի մշակների կողմից մի հրաւէրով դիմեց իրանց գերմանացի մշակեղբայրներին։ Այս հրաւէրը երևեցաւ Սէդանի պատերազմից և Նապոլէոնի անկումից յետոյ Ֆրանսիայի մշակները հրաւիրումէին գերմանացի մշակներին, որ նոքա պահանջեն խաղաղութեամբ վերջ տալ այդ կորստական պատերազմին, որովհետև ամենայն պատերազմ մշակների շահերին հակառակ է։ Գերմանացիք լուռ չ'մնացին։ Գերմանիայի ազգամիջեան ընկերութեան բաժիններից մինը, Հանովերի ընկերութիւնը, դորա նման հրաւէրով պատասխանեց, հրաւիրելով կառավարութեանը վերջ տալ այդ պատերազմին։

Սորա նման մշակ դասի առաջնորդները Բէբէլ և Լիբկնեխտ բարձրաձայն բողոքեցին, որ պատերազմը Ֆրանսիայի դէմ Նապոլէոնի անկումից յետոյ անբարոյական գործ է։ Միևնոյն բանը յայտնեց Ռէյխստագի մէջ (Գերմ. ազգ. ժողովը) Եակոբի երեսփոխանը։

'Ի հարկէ այս բոլորը ոչինչ ազդեցութիւն չունեցաւ պատերազմի ընթացքի վերայ։ Միքանի Հանովերացի մշակներ բանտարկուեցան. Եակոբին փակուեցաւ բերդում, չ'նայելով որ նա երեսփոխան էր, Բէբէլ և Լիբկնեխտ այժմ էլ դատաստանի տակ են։ Բայց սորանով յայտնուեցան միջազգային ընկերութեան ձգտումներն ու ուղղութիւնը։

×

Այսպէս վարուեցաւ այս ընկերութիւնը պատերազմի ժամանակ։ Խաղաղութեան ժամանակ նա պարապումէ գլխաւորապէս պահպանելով աշխատանքը դադարեցնող մշակներին։ Ընկերութիւնը նիւթական միջոցներ ունենալով (որովհետև իւրաքանչիւր անգամ նշանակեալ ժամանակամիջոցում մի նշանակած գումար է ներս բերում,) փող է տալիս աշխատանքը դադարեցնող մշակներին, որ նոքա կարողանան ապրել, մինչև որ գործատերերը համաձայնին աւելացնել նոցա վարձը։ Այս բանում երևումէ գլխաւորապէս ազգամիջեանների ընդիմադրութիւնը դրամատէրերի դէմ։

×

Տեսնենք այժմ թէ ինչ համոզմունքների և ձգտումների տէր է ֆրանսիական կառավարութիւնը։ Դորա համար մենք մի օրինակ առաջ կ'բերենք։ Պատերազմական տուգանքին ծախսերը հատուցանելու համար ֆրանսիական կառավարութիւնը փողի կարօտութիւն ունէր։ Եւ որովհետև պատերազմի պատճառով սպառուած գանձարանի մէջ փող չ'կար, պէտք եղաւ հարկերին դիմել։ Միքանի երեսփոխաններ առաջարկեցին մրցանել արդիւնահարկը, այսինքն թէ իւրաքանչիւրից իւր արդիւնքների կամ եկամտների համաձայն առնեն, իսկ նոքա որոնք այնքան քիչ եկամուտ են ստանում, որ իրանց ապրուստի համար բաւական չէ, բոլորովին ազատվումէին հարկից։ Ընդհակառակն հարկը ծանրանումէր հարուստ մարդկանց, դրամատէրերի վերայ։

Ֆրանսիական կառավարութիւնը Տիերի բերանով յայտնեց, եթէ որ ժողովը հարկապահանջութեան այս եղանակը ընդունի, կ'հեռանայ տէրութեան կառավարութիւնից։ Ժողովը զիջումը արաւ. նա աւելի լաւ համարեց զոհել խեղճ մշակ դասի բարօրութիւնը քան թէ պ. Տիերին։

×

Պահպանելով այս կերպով դրամատէրերի շահերը, կառավարութիւնը ինչ աչքով կարող էր նայել ազգամիջեան ընկերութեան վերայ։ Վերջին ժամանակներումս ազգային ժողովում նախարարներից մինը նոր օրէնքի նախագիծ ներկայացրեց, որի զօրութեամբ ազգամիջեան ընկերութիւնը ապօրինի է համարվում, իսկ այդ ընկերութեան անդամ եղողը պատժվումէ Ֆրանսիայի քաղաքացի լինելու իրաւունքից զրկուելով բանտարկութեամբ և այն և այն։

×

Այդ օրէնքի վերայ եղած վիճաբանութիւնների ժամանակ շատ երեսփոխաններ մեղադրեցին ընկերութեանը ասելով, թէ նա չէ ճանաչում գերդաստանի իրաւունքը, թէ նորա համար կրօն ասածը և առհասարակ սուրբ բան չ'կայ. աշխատեցան նորա ազդեցութեանը վերաբերել Փարիզի վերջին ապրստամբութիւնը կոմունիստների ձեռքով, նորան վերաբերեցին նոյնպէս Լիոնի, Մարսէյլի և ուրիշ քաղաքների մշակների շարժողութիւնները։ Ժողովը չ'կամեցաւ ոչինչ ապացոյց լսել այն անձերի կողմից, որոնք պաշտպանումէին ընկերութիւնը, կամ հերքումէին նոր օրէնքը։ Տօլէն երեսփոխանի բոլոր կամքը, որ այդ ընկերութեան առաջին հիմնադիրներից մինն էր և որն որ ապացուցանումէր, թէ ազգամիջեան ընկերութիւնը միմիայն նպատակ ունի, այն է մշակների դրութեան բարելաւութիւնը, նպատակ, որին պիտի դիմէ և կառավարութիւնը,—բոլոր նորա կամքը, ասումենք, 'ի զուր անցկացաւ։

Եւ միթէ կարող էին որ և իցէ փաստերով համոզուել այն մարդիկը, որոնք բոլորովին համոզուած են թէ մշակ դասի աղքատութիւնը անհրաժեշտ երևոյթ է, որ միշտ պիտի լինի հասարակութեան մէջ։

Այս մտքի դէմ սաստիկ խօսեցաւ Լուի Բլան երեսփոխանը։ Իւր ճառի սկզբում նա յայտնեց, թէ ինքը երբէք չէ պատկանել ազգամիջեան ընկերութեանը, բայց մերժումէ այդ օրէնքը, որովհետև վատ հետևանքներ կ'ունենայ։ Դորանով ընկերութիւնը չի քանդուիլ, այլ միայն ծածուկ կ'ընդունի, մեծ նշանակութիւն կը ստանայ, յեղափոխութեան ճանապարհով կը գնայ, փոխանակ այն ճանապարհին, որով մինչև այժմ գնումէ նա, այսինքն փոխանակ աշխատանքի դադարման։ Սորա վերայ նա աւելացրեց, թէ Անգլիայում աշխատանքի դադարումը օրէնքով ընդունուած է և ամենևին չէ հալածվում։ „Պարոններ, աւելացրեց նա իր ճառի վերջին, այդ օրէնքով դուք ապագայում ամենազարհուրելի ընկերական յեղափոխութեան պատճառ կը լինէք!!"

×

Նոր օրէնքի հակառակորդների ճարտարախօսութիւնը անօգուտ կերպով անցաւ,—օրէնքը ընդունուեցաւ։ Ահա այդ օրէնքը։ „Ամենայն ազգամիջեան ընկերութիւն, ինչ անունով էլ լինի ինչպէս նա և մշակների ազգամիջեան ընկերութիւնը, որի նպատակն է կազմել, հերքել սեպհականութիւնը, գերդասանը, հայրենիքը, կրօնը, իւր երևած օրիցը Ֆրանսիայի մէջ, դաւաճանութիւն է համարվում հասարակութեան ապահովութեան դէմ"։

×

Բացի Ֆրանսիայից ազգամիջեան ընկերութիւնը հալածվումէ Գերմանիայում և Սպանիայում։ Սորանից մի քանի ամիս առաջ Բիսմարկը բոլոր կառավարութիւններին առաջարկեց ընդհանուր միջոցներ գործդնել այդ ընկերութիւնը ոչնչացնելու համար։ Դորա նման մի առաջարկութիւն արեց վերջին օրերս և Սպանիայի նախարարը։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Դարևոր ժամանակներից հետէ մեր ազգի երեք տեղ կաթուղիկոսական գահ լինելը ամէնքիս յայտնի է։ Այդ տեղերից Էջմիածնի աթոռը միշտ առաջին և ընդհանրութեան իրաւունքն ունէր, երկրորդ տեղը բռնում էր Սսի աթոռը, իսկ երրորդը Աղթամարինը։

Այս երեք աթոռների միմեանց և առ ազգն ունեցած յարաբերութիւնները չատ պարզ էին։ Էջմիածնի կաթուղիկոսը իբրև ամենայն Հայոց հոգևոր գլուխ, իւր վրա էր կրում ազգի ընդհանրութեան վերաբերեալ բոլոր ծանրութիւնները և իշխելով ամէն երկիրներում և տէրութիւններում գտնուած Հայերի վրա, մեծ համարմունք ունէր և իւր երկու եղբայրներից, որոնցից մէկը Սիս նըստած՝ հովուում էր Կիլիկիոյ՝ և միւսը Աղթամարայ վիճակները։ Վերջիններս իբրև կաթուղիկոս, իրաւունք ունէին եպիսկոպոս և մեռոն օրհնել միայն իւրեանց թեմերի համար, իսկ եկեղեցական զըլխաւոր խնդիրների մէջ նոքա դիմումէին Էջմիածնի կաթուղիկոսին։

Բացի այս երեք կաթուղիկոսից, մեր ազգն 'ի հնուց ունեցել է և երկու պատրիարգներ, որոնք մի և նոյն ժամանակը վարել են և հոգևորական և աշխարհական պաշտօն։ Դոցանից աւագութեան պատիւը թէպէտ վերաբերումէ Երուսաղէմի պատրիարգին, իբրև Քրիստոսի անօրինական տեղեաց կառավարիչ, բայց կ. Պոլսոյ պատրիարգի իշխանութիւնը միշտ բարձր է եղել։ Վերջինիս իրաւունքը ընդհանրապէս տարածված է եղել բոլոր Տաճկաստանի մէջ առանց բացառութեան, մինչև անգամ Սսոյ և Աղթամարայ կաթուղիկոսաց վրա։ Կ. Պոլսոյ պատրիարգի ձեռքին է եղել Օսմանեան կառավարութեան և նոցա հայ հպատակների յարաբերութեան կապը։ Մի խօսքով նա եղել է թէ հոգևոր գլուխ Տաճկաստանի Հայերի և թէ աշխարհական դատաւոր և տէրութեան պաշտօնական։

Այս դրութեան մէջն է մինչև այսօր մեր Հայ ազգի վիճակը Տաճկաստանումը, այն զանազանութեամբ միայն, որ մի քանի տարիից հետէ Սսոյ աթոռը մնացել էր առանց կաթուղիկոսի և Կ. Պոլսոյ պատրիարգական իրաւունքը միապետականութիւնից դարձաւ Սահմանադրական, իսկ պատրիարգը՝ գլխաւոր պաշտօնեան է սահմանադրական կառավարութեան։

Սսոյ կաթուղիկոսութեան թափուր մնալը պատճառել էր այն տեղի մի երկու եպիսկոպոսի յարուցած խռովութիւններից և երկպառակութիւններից, որոց մէկը Նիկողայոս եպիսկոպոս զաւաճանեց միւսի՝ Խաչատրի կեանքին և այդ վէճը մինչև այսօր չարունակվում էր Կ. Պոլսոյ Ազգային Վարչութեան մէջ։ Անցեալ 1871 թուին Սսումը խռովութիւնները վտանգաւոր ձև առան։ Նիկողայոս եպիսկոպոսը սաստկացրած իւր կողմնակիցները, կամեցաւ Ազգային Վարչութիւնից ծածուկ ձգտել կաթուղիկոսութեան, աշխատելով կողմնակի կերպիւ տէրութիւնից իրաւունք ստանալու։ Սսոյ թեմը բողոքեց Կ. Պոլսոյ Ազգային Վարչու-

թեանը և Սսոյ կաթուղիկոսութեան հարցը վերանորոգվեցաւ։

Կ. Պոլսոյ Ազգային Վարչութիւնը երկար վիճաբանութիւններից և խորհրդակցելից յետոյ վերջապէս վճռեց գաւառների ընտրութեամբ հաստատել Մկրտիչ Անկիւրոյ եպիսկոպոսին կաթուղիկոս տանն Կիլիկիոյ համաձայն նախնի կանոնաց, այն զանազանութեամբ միայն, որ Սսոյ կաթուղիկոսը պարտաւորվի ենթարկվիլ Սահմանադրական Վարչութեանը։

Այս մասին մեծ խռովութիւններ ծագեցան Ցանկաստանումը. կուսակցութիւններ կազմվեցան և ի վերջոյ քուէի առաւելութիւնը վճռեց գործը և Մը-կրտիչ եպիսկոպոսը կոչվեցաւ կաթուղիկոս տանն Կիլիկիոյ կամ Սսոյ։

Այժմ Ցանկաստանումն այս հարցն առաջին տեղն է բռնում, ոմանք կամենումեն պնդել, թէ Սսոյ աթոռի վերանորոգութիւնը վնաս է Հայոց ազգի միութեանը, և այլք ընդհակառակն հաստատումեն, որ դա ոչինչ երկպառակութեան պատճառ չը լինելուց յետոյ, ևս աւելի հաստատում է Էջմիածնի աթոռի ընհանրութեան իրաւունքը և երբէք Սսոյ աթոռը հակաթոռ չէ կարող լինել Էջմիածնին։

Վերջին և գլխաւոր կուսակցութեան զօրաւոր փաստերը սոքա են, որ Կիլիկիոյ Հայն ևս լուսաւորչական լինելով, և ունելով ի վաղուց հետէ կաթուղիկոս, նա միշտ ճանաչել է Էջմիածնի նախապատուութիւնը և երբէք չէ հետաքրքրել ընդհանրապատուութիւնը և երբէք չէ հետաքրքրել ընդհանրական դիտաւորութեամբ. բայց եթէ հիմի այսքան խռովութիւններից և Նիկողայոսեան երկպառակութիւններից զզուելուց և բողոքելուց յետոյ, եթէ չը տրուի նրան իւր նախկին նշանակութիւնը, Կիլիկիոյ մեր եղբարքը, ինչպէս և իրանց ամէն խնդրագրի մէջ յայտնումեն, կարող են վնասանգաւոր ապագայ ունենալ, մանաւանդ որ Էջմիածնի կաթուղիկոսութեան իրաւասացութիւնը նոքա միշտ ընդունել են և նոյն իսկ Վեհափառ Գէորգ կաթուղիկոսի ընտրութիւնը իրանք էլ ձայնով մասնակցել են։

Վերջին մեծագոյն մասը, իբրև մի զօրաւոր փաստ, մէջ է բերում և այս, որ երբէք Ցանկաստանի Հային Էջմիածնի իրաւասացութեան տակից դուրս դալու նպատակ և կարողութիւն չունի. մինչ դեռ ինքը Օսմանեան կառավարութիւնը ճանաչում է Էջմիածնի կաթուղիկոսի ընդհանրութեան իրաւունքը և Կ. Պոլսոյ պատրիարքին ճանաչումէ փոխանորդ Էջմիածնի կաթուղիկոսի. որովհետև եղան միջոցներ, երբ Էջմիածնի կաթուղիկոսները ժամանակ առ ժամանակ կամեցան մի փոխանորդ ուղարկել Ցանկաստան, Օսմանեան կառավարութիւնը բացէ ի բաց յայտնեց դրա աւելորդութիւնը, բացատրելով, որ ինքը Պոլսոյ պատրիարքին միայն ճանաչումէ Էջմիածնի կաթուղիկոսի փոխանորդ։

Այժմ Կիլիկիոյ կաթուղիկոսը ընտրուած և Ազգային Ընդհանուր Վարչութիւնից հաստատված է։ Ինչպէս լսումենք, Սրբազան Մկրտիչ նորընտիր կաթուղիկոսն աշխատում է ամենայն հսկողութեամբ վերանորոգել Կիլիկիոյ խաղաղութիւնը և բարեկարգութիւնն ու լուսաւորութիւնը ներս մըտցնելու հետապնդումէ։ Սրբազան Մկրտիչ կաթուղիկոսի այս իւր պաշտօնին յարմար վարեցողութիւնը փոքր առ փոքր խաղաղացնումէ և Կ. Պոլսոյ այս մասին ծագած խռովութիւնները։

Վ.

ՆԱՄԱԿ ԴԱՒՐԷԺԻՑ

Պատուական լրագրիդ մէջ („Մշակ“. № 8) կարդալով Պարսկաստանի սովի վրա մի քանի տեղեկութիւնք, և տեսանելով, որ չկայ մեր քաղաքից ոչինչ ծանօթութիւն տուող հարկաւորեցայ պատմել մի քանի բան այդ մասին։ Արդարև Ատրպատական նահանգը երջանիկ դրութեան մէջ կը գտնուի համեմատաբար քան զամենայն նահանգս Պարսկաստանի, վասն զի Ռուսիոյ կառավարութեան թոյլտուութեամբ Կովկասէն առատ ցորեան և ուտելիք կը փոխարդրեն աստ։ Հետևապէս նոյն իսկ Դաւրիժոյ մէջ թողով արտաքուստ եկածը, առատ ցորեան կը գտնուի. բայց յիրաւի մտածելու է թէ ինչի հասարակութիւնը այնքան թշուառութեանց ենթարկուած և ամենայն օր բազմաթիւ անձինք սովամահ կը կորնչին, այս մի զաղտնիք է, որոյ մասին ներքևը պիտի խօսիմ։ Առ այժմ լաւ իրազիկ առնելոյ համար իմ գրուածքս, պարտ կը համարիմ նախ մի քանի տեղեկութիւնք տալ տեղոյս գործաւորաց վարձքի մասին։ Ընդհանրապէս Դաւրիժոյ հասարակութեան մեծ մասը կը կազմեն գործաւորք. սոցա վարձը գտնման և ձրմռան (թէև ձմեռը ոչինչ գործ չէ լինում) օրական առ առաւելն կը լինի 15 ց67½ կոպ. իսկ ամառը 20 կամ 25 կոպ. որովհետև այն ժամանակ հունձք լինելով շատերը կը ցրուին գիւղօրայքում։ Այս 15 կամ 25 կոպէկով մշակները հազիւ կը կարողանային, դառն քրտինք թափելով, ուտելեաց առատութեան ժամանակ իւրեանց և ընտանեաց պարէնը հայթայթել։

Ցայսմիկ է, թէ ինչպէս հերու խօլերան ապականեց Պարսկաստանը, նա մանաւանդ Ատրպատական նահանգը. այս բաւ չէր և դժբաղդութիւն ընդ դժբաղդութեանց հետևելով մի սաստիկ հեղեղ յանկարծակի ողողեց քաղաքը։ Քանի քանի տունք և շինուածք հիմն ի վեր տապալեց, որքան ընտանեաց կայքը և ինչքը քշեց տարաւ և թափեց Ահի կոչուած գետի մէջ, որքան մարդիկ զոհ եղան այդ հեղեղին, չեմ կարող բացատրել ձեզ խօսքով։ Գրեթէ Դաւրիժոյ մի քառորդ մասը աւերեց այդ սարսափելի հեղեղը, այնպէս որ խեղդուողների թիւը մինչ 1,000 կը հաշուէին. վասն զի ջուրը այնքան յորդել էր, որ մի քանի անձինք կանգնած գոլով մի կամրջի վրա հեղեղի դալը դիտելով ըսկըսել էին փախչել, բայց հեղեղը անմիջապէս հասել և քշել էր նրանց։ Սոյն պատճառաւ շատ գերդաստանք աղքատացան և յետին չքաւորութեան կետը հասան, մինչդեռ միւս կողմից մաղձատը անխնայ կը ջարդեր։ Նա ևս յայտնի է, որ Պարսկաստանի մէջ սովը երկու տարիէն ի վեր էր, որ կը տիրէր, մինչդեռ յայնժամ Դաւրէժ առատութեան մէջ էր։ Այս լսելով Պարկաստանի բնակիչները, սկսեցին զեղուլ աստ անհամար բաղմութիւն, հիւանդոտք և ցաւագարը, որոց պատճառաւ պարէնից դինը սկսեց բարձրանալ, մանաւանդ, որ նոյն իսկ քաղաքի չքաւորք բաղմացել էին ոմանք հեղեղի առիթով, ոմանք ևս, թէ և կը ժառանգէին մի փոքր դրամագլուխ, բայց նոքա ևս մաղձախտի դժնդակ կոտորածոց միջոցին վատնել էին։ Ցմեռը և այն սաստկագոյն ցուրտը, որոյ նմանը երկար տարիներէն ի վեր չէր տեսնուած Դաւրէժում, վրա հասնելով առաւել ևս թշուառութեան ենթարկեցին խեղճ հասարակութիւնը։ Արազստանէն հետզհետէ կը թափուէր սովալլուկ ժողովուրդը, որտեղ որ և մերաղնեայք մեծ մասը կը կազմէին։ Նոքա, որոնք դեռ ոյժ և կարողութիւն ունէին կը դաղթէին դէպի Կովկաս և կամ Ռուսաց Հայաստան. իսկ նոքա, որոնք անկար էին կը մնային աստ։ Փողոցները լցուեցան մուրացկաններով, որոց յուսահատութեան ձայնը և ողեխառն աղաղակները ցաւեցնում էին մարդու սիրտը։ Այս միջոցին թոյլտուութիւն եղաւ Կովկասից ուտելիք փոխադրել աստ, ուստի ամենայն օր առատ ուտելիք կը բերէին Երասխայ եղրը, աստ փոխադրելու համար։ Բայց ինչպէս սովորութիւն է եղել միշտ Պարսից մի քանի անձանց այսպիսի դէպքերում օգուտ քաղել խեղճ հասարակութիւնից, արդ այս անխիղճ անձինք ինքեանք գնելով բոլոր ցորեանքը և գիներ ժամանակ մոցնելով քաղաքը, լցնումէին իրանց ամբարները մինչ դեռ լի է, առաւել թանգ վաճառելու համար, և այս կերպով սով էին ձգում ժողովրդեան մէջ. ահա այս է բուն իսկ սովի պատճառը, այս է այն զաղանիքը, որ ասացի առաջին տողերում։ փոխանակ բանալ տալու այն բազմաթիւ ամբարները և բաշխել ժողովրդեան ամենեին թշուառ հասարակութեան օգնութիւն չէ հասցրած։ Գտնուած հացն անդամ զրեթէ խմոր էր, խառն զանազան նիւթոց հետ, այսինքն, հողով, աւազով, նուշի կեղևով հետ, և այլն։ Այս մասին կառավարութիւնը խստիւ պատժելով հացագործներին, զրաօրինակ մի քանիսի ականջը բռնելով պատի վրա, մի քանիսին բանդարկելով, հազիւ կարողացաւ լաւ հաց եփել տալ, բայց ինչ օգուտ, որ այն ևս ամենաթանգ գնով։

Մենք մի խոշոր չնորհակալութիւն կը յայտնենք Դաւրիժարնակ քրիստոնէից, նա մանաւանդ Հայոց, որ ոչ թէ օգնեցին իւրեանց եղբարց, այլ նոյն իսկ Պարսկաց անդամ։ Երբ Սպահանից և նորա շրջակայից, Քեազազից և այլ նահանգներից բազմաթիւ հայ ընտանիք եկան այստեղ, նոքա, որոնք կարողացան, դաղթեցան դէպի Կովկաս. իսկ նոքա, որոնք չը կարողացան, մնացին քաղաքում, որոց մասին դեր. Առաջնորդն հրաւէր կարդաց առ աղգայինս, ձեռնտու լինելու համար իւրեանց եղբարց։ Ցաջողութեամբ կատարուեց Սրբազանի հրաւէրը, և ժողովուեցաւ 146 թուման Պարսից դրամ։ Նաև Երևանու նահանգից եկաւ 70 մանր. Ռուսաց, կառավարութիւնն էլ նուիրեց 950 լիտր ցորեան (իւրաքանչիւր 3½ լիտրը Ռուսաց մի փութ հաշուելով)։ Այս ամենը դեր. Սրբազանը յանձնեց պատուելի հոգաբարձուաց, որոնք սկսեցին բնակութեան տեղիք, հագուստ, անկողին և ուտելիք հայթայթել այս դժբաղդ եղբարց համար։

Այս օրերս օդոյ խստութիւնը վերջանալով, բացի երեք անձանց, ամենքը ճանապարհ ընկան դէպի Երևան, որոց ծախսը նոյնպէս հոգացին հոգաբարձուք յիշեալ դումարից։ Այս մեռնողների թիւը հասնում է 11 անձի, ոչ թէ պատճառ և անպարէն մնալու պատճառաւ, այլ ճանապարհին ելնելով բոյսեր ուտելով, որը նոցա մահուան պատճառ է դառնում, և թողնելով նրանք իւրեանց մեռած որդւոյն ճանապարհին, դաղանաց կերակուր էին եղել, և երկու անձինք, որոնք զոհ էին եղել պարսիկ ուղտապանից։

Նոյնպէս գոհ ենք Անդլիու հիւպատոսարանից, որ 150 թուման չնորհելով, հոգաբարձուք բաժանեցին այն, Դաւրիժոյ բնիկ հայ չքաւորաց, որ և ամենայն կողմանէ Դաւրիժոյ Հայերը զերծ մնացին այս դժբաղդ վիճակէն։ Գարնան դալը և այն յորդառատ անձրեւը յոյս է տալի մեզ և ինչպէս հաւանական է երևում, այսուհետև պիտի խաղաղանայ երկիրը, որովհետև հիմա մշակները կարող են աշխատել և իւրեանց օրական ապրուստը գտնել։

Վերջ կը տամ նամակիս, որ եթէ այս գրութիւնը կը հիւրընկալուի ձեր լրագրի էջերի մէջ, գալ անգամ մանրամասնաբար կը նկարագրեմ ձեզ Դաւրիժոյ հայ հասարակութեան բարքը, վարքը, սովորութիւնքը, խօսակցութեան ոճը, ուսումնարանների թիւը, եկեղեցիքը, և այլն և այլն։ Նաև Գարնից Մուհէրրեմ ամսոյ 10-դ երեկի աւուր անցքը, որ խիստ հետաքրքրական է*)։

1872. մարտի 25-ին Ա. Հ.
Դաւրէժ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամենքը գիտեն թէ Հռոմի պապը նեղվումէ, բայց շատերը չը գիտեն, ինչ ձևով։ Ահա այն ընդունված ձևը որով նեղվումէ այն մարդը որը սէր և եղբայրութիւն է քարոզում, որը իրան Քրիստոսի փոխանորդ է համարում երկրիս վրա։ „Անիծված լինի նա (նեղվածը) տանը և դուրսը, անիծված լինի քաղաքում և գիւղում, անիծված արթուն և քնած ժամանակ ուտելու, և խմելու ժամանակ, կանգնած և նստած ժամանակ, անիծված նորա միսը և ոսկորները, թող աւողջութիւնը նորանից հեռանայ, և այն... ամէն“։

* *
*

„Մշակի“ լրագրի խմբագրութիւնը չնորհակալութեամբ ուսացաւ այս օրերս հրատարակված պ. Վասիլի Խօջայեանցի „ճանապարհորդութիւն Վեզուվեան հրաբուղխ սարի վերա“։ Սա մի ճանապարհորդութիւն է Իտալիայում 1865 և 1866 թուականներին արած։ Գիրքը քանի մի գեղեցիկ պատկերներով զարդարած է։ Հեղինակը իր առաջաբանի մէջ խօստովանումէ, որ բացի իր սեպհական տեսածից և լսածից նա քանի մի նշանաւոր գրքերից, որպէս աղբիւրներից, օգուտ է քաղել։ Գրքի մէջ մենք տեսնումենք երկու բարի նպատակ,— մինը առաջարկել հայ կարդացողին Իտալիայի մասին հետաքրքիր տեղեկութիւնները, երկրորդ որ նորա վաճառմանից յետոյ գոյացած գումարը հեղինակը դործ կը դնէ Թիֆլիսի Գայանեան և Մարիամեան հայ օրիորդների երկու ուսումնարանների ուսմանը օժանդակելու։

* *
*

Փարիզի երեկի դահիճ պ. Հէյնդրէիը նորերումս յանկարծ մեռաւ։ Նա 70 տարեկան էր և կատարել է իր սարսափելի պաշտօնը 54 տարի չարունակ։ Մարդիկների գլխները կտրելուց առաջ նա միշտ վարժվումէր որթերի գլխները կտրելով, և սորա համար առանձին փող էր ստանում։ Նորա տարեկան ռոճիկը 9,000 ֆրանկ էր, և բացի սրանից ստանումէր ամեն մի կտրած գլխից 150 ֆր։ Այժմեան նշանակված դահիճը պ. Բոկը ստանումէ տարէն 12,000 ֆրանկ ռոճիկ։ Պ. Հէյնդրէիը, իր կեանքի մէջ 139 մարդոց գլուխը կտրեց։

* *
*

Մի իտալական ծաղրական լրագիրը նկարումէ Պիոս IX պապի աշխարհական իշխանութեան թաղումը հետևեալ կերպով։—Դագաղի մէջ պարկած է պապը եղջիւրի չորերով, Եւրոպայի երկիրները տանումեն այդ դագաղը դէպի գերեզմանատուն, իսկ Իտալիան փորումէ գիսը։ Լրագրի այդ համարը աւելի թանգ էր վաճառվում, քան թէ սովորաբար։

* *
*

Ներկայ տարվայ մայիսի 1-ին պիտի Սորաղբուրդի գերմանական համալսարանի բացման հանդէսը լինի։ Ամեն գերմանական համալսարանները պրոֆէսորներին և ուսանողներին ուղարկվեցաւ հրաւէրքը բացման հանդիսին ներկայ գտնվելու։

* *
*

Փարիզում քննվում է այժմ մի զարմանալի գործ։—Մի հրաժալի դեղեցիկ հրէայ աղջիկը անցնումէր իր ընկերուհու հետ Փարիզի մի զբօսարանում,—յանկարծ մի ֆրանսիուհի արագ քայլելով նորան մօտենումէ, և երեսին գցումէ մի փոքրիկ չիչ։ Շիչի մէջ կար մի վտանգաւոր թթու... բաղդաւորաբար թթուն դիպաւ միայն աղջկայ շինիոնին (սուտ մազերին) և ոչ թէ երեսին։ Ցանցաւոր կինը բռնվեցաւ, և խօստովանեց, որ նա այդ արեց նախանձից և միայն դիտաւորութիւն ունէր այրել գեղեցիկ հրէայի երեսը։ „Ես առաջ կարծումէի թէ գեղեցիկ եմ, աւելացրեց նա, բայց երբ պատահեցի այն աղջկան, համոզվեցայ, թէ ինձանից գեղեցիկներ էլ կան“։—Բժիշկները կարծումեն թէ նա խելագարված է։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(ապրիլի 12-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպերիալ)	6 ռ.	8	կոպ.
ՓՈԽԱՆԱԿԱԴԻՐ (բարաթ) Պօլս.	6 „	78	„
վճարելիք (լիրա Օսմանեան) .	6 „	80	„
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	5 „	50	„
„ Ամերիկայի սերմից .	7 „	20	„
ԹԱՄԲԱՔՈՒ Տրապիզոնի ակոզք	11 „	50	„
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրօցկու)	9 „	50	„
„ „ միւս տեսակը . .	9 „	40	—
„ զազրանիցա տրանսիդ.	5 „	90	„
մաքսը վճարած	9 „	—	—
ՇԱՔԱՐԱԻԱԶԸ Ռսի.	8 „	50	„
ԱԼԻՒՐԸ կրուպչատակայ Ռուսաստանի բերքը փութը. . . .	3 „	40	„
ԱԼԻՒՐԸ կրուպչատակայ Աֆվերդեանի տեղական ջաղացից (Գեանջայում). . . . . № 1 փութ	3 „	20	„
„ № 2 „	2 „	50	„
„ № 3 „	2 „	—	—
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ . .	1 „	45	„
„ Շորագեալու	1 „	60	„
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	13 „	50	„
„ Մարտինիկայի, ցածրը .	11 „	—	—
„ Մօկո, շատ լաւը . . .	14 „	50	„
ՊՂՊԵՂԸ.	11 „	—	—
ԵՐԿԱԹ.	2 „	20	„
մինչև	3 „	50	„
ՄՕՄ	12 „	—	—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ։

(ապրիլի 7-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի աժէ 32⅝ պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի աժէ 345 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

ԲԱՄԲԱԿԸ Նիւ-Օրլէանի աժէ ֆունտը 11⁷⁄₁₆ պէնս (մօտ 28 կոպ.)։

ԼԻՎԷՐՊՈՒԼ, բամբակի վաճառականը հաստատ է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

АДВОКАТЪ

АЛЕКСАНДРЪ ЯКИМОВИЧЪ ШАХЪ-АЗИЗОВЪ КАМСАРАКАНЪ принимаетъ на себя ежедневно публичную защиту по дѣламъ гражданскимъ и уголовнымъ; составляетъ апелляціи, кассаціи и даетъ совѣты по судебнымъ дѣламъ.

Иногородные, желающіе поручить ему дѣла, присылаютъ выписку изъ документовъ. О принятіи или не принятіи они будутъ извѣщаемы съ первою почтою, или по телеграфу, на ихъ счетъ.

За веденіе гражданскихъ дѣлъ беретъ вознагражденіе на основаніи Высочайше утвержденной таксы, а за защиту по дѣламъ уголовнымъ—по особымъ соглашеніямъ съ кліентами.

Условное вознагражденіе за труды по веденію дѣлъ вѣрители уплачиваютъ ему по выигрышѣ дѣла.

Въ случаѣ проигрыша принятаго имъ дѣла онъ принимаетъ на себя платежъ вѣрителю своему судебныхъ издержекъ.

Контора помѣщается возлѣ Армянскаго Ванкскаго Собора, рядомъ съ Телеграфною Станціею, по Малой Водовозной улицѣ, въ собст. домѣ.

*) Ի հարկէ չնորհակալ կը լինինք պ. Թղթակցից, եթէ նա չարունակէ այսպիսի հետաքրքիր կենսական երևոյթները նկարագրել։ Խմբ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 13 Апрѣля, 1872 г. Ծերէթելի և ընկ (նախկին Դուբէլիրի) տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի։